

Ուսումնական տարիշրջանին մէջ Մուսաբա-  
տեան Համալսարանական Վարժարանէս մեկ-  
նեցաւ Գր. Աղեքսանդր Աջնառութեան Տիղի-  
սկի , ուսանող առաջին տարւոյ երիտաշ-  
փական ճարտարապետութեան :

Ինչպէս վերոյգրեալ թիւերէն կը տեսնուի՝  
Մուսաբատեան սանուց մեծամանութիւնը քա-  
շափայլ հանդիսանալով իրենց առաջին տար-  
ւոյ քննութեանց մէջ , լիսահութիւն կ'ապ-  
դիւն նոյնպէս գտնուելու նաեւ յաջորդ տար-  
ւոյն քննութեանց ժամանակ , ի գոհութիւն  
նախ իրենց սրտին , և ապա իրենց ընտանիաց  
և վարչութեան վարժարանին , և ասիթ միսի-  
թարութեան յուսագնելոյ ազգին :

Վ.Ա.Բ.Ռ.Օ.Խ.Ի.Խ.Ա.Բ.Ի.Խ.

Մ. Համալար. Վարժարանին



ԿԱՏԱՐԵԱԼԻ այ Վ.Ե.Բ.ԶԱ.Ի.Ո.Ր.ՈՒ.ԹԻՒՆԸ

### ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԷՋ



Ցուցնեմ և հարցնեմ բայից խոնարհման  
իրայ ուղղագրական դիտողութիւններս հիւրըն-  
կալելով պատ . Բայց այսի անցեալ զեկոտ.  
Թույն մէջ , դիտել տուած էք , հարցայ կա-  
տարեալին առթիւ , զոր ներկայացուցեր էի ,  
թէ այ վերջարութիւնը «թէ հին և թէ նոր  
ընդհանուր լեզով մէջ կրատրական է՝ հարցայ ,  
հարցուեցայ , և այն . իսկ ներգործականը կը  
վերջանայ ի , հարցի , հարցացի » : Աւստի  
Կ'առաջարիէք ներգործաբար ասել « հարցի ,  
հարցեր , կամ հարցիր , հարցինք , հարցին » :  
Կը խնդրեմ ձեր ոշագրութիւնը հետեւեալ  
կէտերուն .

1. Խօսիմ , իմանամ , և այլ ներգործա-  
կան բայերու կատարեալներն , խօսցայ ,  
իմացայ , դիրաբարին մէջ ներգործական ալ  
են , կրատրական ալ . սրեմն այ կրատրա-  
կերա կոչուած ձեւը իրեւ ներգործական ի

կիր կ'առնուի նոյն իսկ գրաբարի մէջ . ինչու  
շառնուի նաեւ աշխարհնաբարի մէջ :

2. Այ կրատրակերպ ձեւը իրօք աշխար-  
հաբարի մէջ ընդունուած է իրեւ ներգոր-  
ծականի ձեւ , նաեւ իրեւ չէզգրի : Օրինա-  
կի համար , առնեմ , գտնեմ , գիտեմ կատա-  
րեալներն են տեսայ , գտայ , զիտցայ ,  
մոցայ , աղցայ . մանեմ , ելնեմ , հանեմ  
չէզգր բայերուն՝ մտայ , ելայ , հատայ :  
Քանի որ այսպիսի կատարեալներն ընկածեալ  
են հաստատուած են , և Բայց մէկ ինքն ալ  
կը գործածէ զայն , հարկ չկայ հարցի ,  
հարցեր , և այլն առել , որպէս թէ հարցայ ,  
հարցար-ը զարաւողութիւն մը եղած լինէր :  
Եթէ հարկ է հարցի զերել , հարկ է նաեւ  
տեսի , գտի , ելի , մտի , հասի ուղղագրել ,  
ինչ որ անզործնական է :

3. Հարցայ , հարցար , հարցաւ , հար-  
ցնց , հարցան կատարեալի ձեւը ես շեմ  
յօրինած և շեմ առաջարիեր զայն իրեւ  
նորութիւն , այլ իրեւ արդէն կայ և գործա-  
ծածական է աշխարհաբար Ակին գաւառաբար-  
բառին մէջ , և ես բացարձակապէս կ'երաշ-  
խաւորեմ ասոր իրականութեանը :

Վաստահ եմ որ , եթէ Բայց մէկի խմբա-  
զրութեան բանաւոր երեւնալով այս ներ-  
կայացաւմն՝ հարցայ պարզ ձեւը գործածէ ,  
իւր օրինակին պիտի հետեւին րոլորգ\* :

Ս. Ս. ԳԱՅԻԻԵԼԱՆ

### Նիւ Եորբ

\* Այդ մասին նոյն է զարձեալ մեր համա-  
զում , քանի զայն փոխելու բաւական փառ-  
աեր չենք գոնք : Աւանց հարկի՝ յանկարույն  
որէնք մի սահմանել եւ այնոր գործարութիւնը  
պահանջել , այդ գործ է գերազանց հեղինակու-  
թեան մի , զոր չեւնի « Բայց մավեպէն , կարծեմ  
եւ ու ոք : Ան մի որ օրէնքով հաստատուած  
է , օրէնքով եւ կը վերցուի կամ փոփոխու-  
այլ օրէնքն ոռոկնաց ձեռքը է , այլ հասա-  
ցակաց օրինազրքին մէջ , իւր յատուկ սահ-  
մաներով ամփոփուած . մեր խնդրուն մէջ գե-  
ռականութիւնն է այդ , սոս հրամաներու  
անհատուելն՝ լեզուն խանգարել ըստէ ։ Դար-  
ձեալ , և եւ է փոփոխութեան մէջ առաջին դի-  
մելի պայմանն է շասագումին պէտքը : Սա-